




**Անթրոպոէկոհամակարգը և նրա կառուցվածքը.** Անթրոպոէկոլոգիական խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է նախապես պարկերացնել **մարդու էկոլոգիայի կառուցվածքը, միջավայրը (Նկ. 1):**

**Ինչ է մարդու էկոլոգիան:** Մարդու էկոլոգիան գիտության մի բնագավառ է, որն ուսումնասիրում է տարբեր մակարդակի անթրոպոէկոհամակարգերը՝ գլոբալից (համաշխարհային) մինչև տեղական (պետություն, քաղաք կամ նրա մեկ շրջանը, գյուղ) և նույնիսկ առանձին «կեյ» (բնակելի շենք, գործարանային արտադրամաս և նույնիսկ արբանյակային կայան իր անձնակազմով): Համաշխարհային անթրոպոէկոհամակարգը (կամ անթրոպոէկոսֆերան) ընդգրկում է Երկրի ամբողջ մակերևույթը, մթնոլորտն ու դրա մոտակա տիեզերական տարածքը և մոլորակի ողջ բնակչությունը (մարդկային հասարակությունը), որն օգտագործում է մոլորակի բնական պաշարները և իր իսկ սրտեղծած տեխնիկական միջոցների օգնությամբ ապահովում սեփական գոյությունն ու զարգացումը՝ միաժամանակ զգալի էկոլոգիական վնաս պատճառում այդ նույն մոլորակին և ինքն իրեն:



**Նկար 1.** Մարդու էկոլոգիական միջավայրի բաղադրիչների դասակարգումն ըստ Ն.Ֆ. Ռեյմերսի:

Մարդու էկոլոգիայի ուսումնասիրության օբյեկտը անթրոպոէկոհամակարգն է:

Անթրոպոէկոհամակարգը (մարդաէկոհամակարգը) մի համակարգ է,

որում ձևավորվում են այնպեղ բնակվող մարդկանց հիմնական հասկոթոթոնները:

Յուրաքանչյուր անթրոպոէկոհամակարգ ունի որոշակի ներքին միապարրոթոթոն և առանձնանում է հարևան անթրոպոէկոհամակարգերից նկապելի բազմապարրոթոթամբ, ինչպէս օրինակ՝ քաղաքը և գյոթղական բնակավայրը:

Անթրոպոէկոհամակարգն առանցքային նշանակոթոթոն ունի մարդու էկոլոգիայի ոսոնմնասիրման համար, քանի որ մարդաբանական հետազոթոթոթոնները, ի վերջո, հանգում են տարբեր ժամանակների (անցյալ դարաշրջաններից եկող և դեպի ապագան գնացող) անթրոպոէկոհամակարգերի ոսոնմնասիրմանը:

Անթրոպոէկոհամակարգը բաղկացած է մի շարք փոխկապակցված բաղադրիչներից ու գործընթացներից, որոնք տեղի են ունենում որոշակի տարածքում և որոշակի ժամանակ:

Դիտարկենք անտրոպոէկոհամակարգի մոդելը (Նկ. 2), որի կենտրոնում **մարդկային հանրոթոթոնն** է (քաղաքի, տարածաշրջանի, երկրի բնակչոթոթոյան, աշխատողների մասնագիտական խոսմբի և այլն): Այն փոխազդում է շրջակա բնոթոթոյան և տնտեսոթոթոյան հետ, որի մասն էլ հենց կազմում է իր սոցիալ-տնտեսական պայմաններով:



**Նկար 2.** Անտրոպոէկոհամակարգի մոդել:  
Մոդելի կառուցվածքի բացատրոթոթոյանը՝ QR 2-ում:

Շրջակա միջավայրի էկոլոգիական իրավիճակը զգալի ազդեցություն ունի մարդկանց վրա: Ավելին, այդ միջավայրի բոլոր տարրերն էլ իրենց հերթին փոխազդում են միմյանց հետ՝ կազմելով ավելի մեծ համակարգեր (այս հարցին կանդրադառնանք հաջորդ դասերին): Շրջակա միջավայրի և դրա առանձին տարրերի հատկությունները, դրանց փոփոխությունները բերում են հանրության հիմնական բնութագրերի փոփոխությանը, որոնք կարող են լինել և՛ դրական, և՛ բացասական: Մինևոյն ժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ **անթրոպոէկոհամակարգերն ունեն որոշակի կայունություն**, որը կարող է խաթարվել կառավարությունների, բուն բնակչության և արտաքին ուժերի ամենատարբեր գործողություններով:

Անթրոպոէկոհամակարգի մոդելները հնարավորություն են տալիս պատկերացումներ կազմելու, վերլուծելու, գնահատելու և կանխատեսելու համակարգի վարքագծը, այսինքն կառավարելու հանրության ներսում ընթացող գործընթացները և իրագործելու առաջադրված նպատակները: